

1

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ETUDES

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՂԵՌՆ
(ԱՐՑԱՆԻ ԺԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ճարտարապետական կոթողները որեւէ տարածքում որեւէ էթնիկ հանրութեան պատմական ներկայութիւնը նշող յուշեր են եւ լաւագոյն ցուցիչը տարածքի պատմական պատկանելութեան վերաբերեալ: Սա լաւ գիտակցում են նաեւ հարեւան Ադրբեջանում, որտեղ կանխամտածուած եւ հետեւողականօրէն ոչնչացւում են հայկական մշակութային՝ ի մասնաւորի ճարտարապետական յուշարձանները: Մշակութային ժառանգութեան նկատմամբ ցուցաբերուած այսպիսի վերաբերմունքը ամբողջութեամբ համապատասխանում է միջազգային ատեանների ընդունած մշակութային ցեղասպանութիւն եզրոյթի չափորոշիչներին¹: Ուստի երբ խօսում ենք աւելի քան մէկ ու կէս միլիոնի հասնող անմեղ հայերի անմարդկային բնաջնջման մասին, չպէտք է մոռանանք ցեղասպանութեան հետեւանքով հայ ժողովրդի կրած մշակութային արժէքների եւ յատկապէս ճարտարապետական յուշարձանների կորստի մասին: Մշակութային ցեղասպանութիւն իրականացնողների համար հէնց սրանք են առաջին հերթին թիրախ դառնում: Մինչեւ վերջերս Ադրբեջանին բռնակցուած տարածքներում Արցախի ճարտարապետական յուշարձաններն աւերւում էին կամ այլափոխւում:

Արցախի եւ նրա ճարտարապետութեան մեկուսացումն Ադրբեջանում հետապնդում էր իշխանութիւնների առաջադրած գերինդորին հասնելու հեռահար նպատակներ՝ Լեռնային Ղարաբաղի տարածքը եւ հայ ժողովրդի արցախեան հատուածը վերադրել ադրբեջանցիների կարծեցեալ հայրենիքը «հանդիսացող» Ադրբեջանին եւ հիմնաւորել հայ ժողովրդի կերտած նիւթական ու մշակութային յուշարձաններն աղուանական (ադրբեջանական) համարելու մտացածին վարկածը: Ադրբեջանական պատմագիտութիւնն այդ նկրտումներն իրականացնելու համար ոչ մի բա-

1 CHARNY, I. W., *Classification of Genocide in Multiple Categories*, Encyclopedia of Genocide. Israel W. Charny editor in chief, I, Santa Barbara, California 1999, 9.

նի առջեւ կանգ չի առնում՝ ընդհուպ Լեռնային Ղարաբաղի, Միւնիքի, Նախիջեւանի տարածաշրջանների եւ նրանց մշակութային յուշարձանների «աղուանացումը», «թուրքացումը»՝ վերջիններս կապելով Ադրբեջանի կրակի տանարների հետ²:

Հակահայկական գործողութիւններն Ադրբեջանում վարչարարական-կազմակերպական մակարդակով համակարգուած էին եւ ընթանում էին միասնական ճակատով³: Առ այսօր շարունակուող այս գործընթացում ներգրաւուած են քաղաքագէտներ, պատմաբաններ, ճարտարապետներ, հնագէտներ, լեզուաբաններ, ազգագրագէտներ: Օգտագործելով բոլոր հնարաւոր միջոցները՝ նրանք ձգտում են Ադրբեջանի տարածքն ադրբեջանցիների հետ կապող արմատներ գտնել եւ այն անջրպետել հայերից, ուստի եւ՝ հայկական մշակութային ժառանգութիւնից: Արցախի միջնադարեան մշակոյթը «աղուանացնելու», քրիստոնէական եկեղեցիները, վանքերը, ճարտարապետական միւս կառոյցները ոչնչացնելու քաղաքականութիւնը խթանում էր պետական բարձր մակարդակով:

Ճարտարապետութեան պատմաբան Է. Աւարովը «Շուշի Բաղախի նարտարապետութիւնը» (Բաքու, 1977) գրքում քաղաքի հիմնադրման, քաղաքաշինական զարգացման ու ճարտարապետութեան պատմութիւնը ներկայացնելիս միտումնաւոր անտեսում է հայկական աղբիւրները, որոնք առատ նիւթ են պարունակում հայերի կողմից քաղաքի հիմնադրման եւ հայ բնակչութեան շինարարական գործունէութեան վերաբերեալ: Շուշիի Մխիթարաչէնի դարպասների մօտի պարսպահատուածի 2005ին իրականացուած պեղումները եւս փաստում են, որ այս հատուածը բնակեցուած է եղել դոնէ ն.Ք. առաջին հազարամեակի սկզբից: Սա մի լուրջ տուեալ է՝ վերջ դնելու Շուշիի սարահարթին առաջին անգամ Փանահ խանի կողմից բնակեցնելու ադրբեջանական առասպելին: Պեղումները ի յայտ են բերել մինչփանահեան մի հզօր կառոյցի շինարարական մնացորդներ⁴:

Մէկ այլ դէպքում ճարտարապետութեան գոկտոր Դ. Ախունդովը իր «Հիմ եւ վաղ միջնադարի Ադրբեջանի նարտարապետութիւնը» (Բաքու, 1986) գրքում հայկական խաչքարերին (որոնց քմա-

2 ШНИРЕЛЬМАН, В., Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье, Москва 2003, 208.

3 ՊԵՏՐՈՍԵԱՆ, Հ., Մշակութային էթնոցիդը Արցախում (Մշակութային ժառանգութեան բռնաւերացման մեխանիզմը), Ի Կաճառ, 2010, քիւ 4 (47-58), 142:

4 ՊԵՏՐՈՍԵԱՆ, Հ. – ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, Լ., Մշակութային հետազոտութիւններն Արցախում, Շուշի, Հանդարերդի վանք, Տիգրանակերտ, Երեւան 2009, 12-13:

հաճօրէն «խաչդաշ» է անուանել), աղուանական ծագում է վերագրել՝ ցուցաբերելով կատարեալ անտեղեակութիւն խաչքարային մշակոյթի առաջացման, գաղափարական բովանդակութեան, գեղարուեստական օրինաչափութիւնների ու զարդարուեստի մեկնարանման հարցերում: Գրքի հինգերորդ՝ «Կովկասեան Աղուանի վանքերի պաշտամունքային սիմվոլիկան եւ նարտարապետութիւնը» բաժնում, նա անտեսելով յուշարձանների վերաբերեալ մատենագիտական եւ վիմագրական հաւաստի տեղեկութիւնները, աղուանական է դարձնում Աղբրեջանի եւ Լեռնային Ղարաբաղի մի շարք եկեղեցիներ եւ վանքեր:

Այսպիսի հրապարակումներով խրախուսուած՝ արդէն 1987ին պաշտօնական շրջաբերականով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի շրջգործկոմներին եւ ուղարկւում իրենց շրջաններում տեղաբաշխուած քրիստոնէական յուշարձանների ցուցակները, որոնք հիմնականում համարւում են աղուանական: Հայկական եւ ճանաչւում միայն նորերը, մեծ մասամբ՝ Ժէ.-ԺԼ. դարերում կառուցուածները: Այստեղ, ի հարկէ, հակասութիւն է առաջանում: Եթէ Լեռնային Ղարաբաղի հայկական յուշարձանները աղուանական են, տրամաբանական պէտք է լինէր, որ դրանք պէտք է գտնուէին աղբրեջանական հոգածութեան ներքոյ: Մինչդեռ տաճարամեակներ շարունակ այդ յուշարձանները աւելուել եւ անտեսուել են:

Աղբրեջանական ԽՍՀ տարածքում հայկական մշակութային յուշարձանները բացարձակ մեծամասնութիւն էին կազմում՝ ընդ 11 հազար, ընդ որում՝ դրանց թիւը միայն Ղարաբաղում հասնում էր 1700ի⁵: Սակայն պաշտօնական փաստաթղթերում արձանագրւում էր բոլորովին այլ պատկեր: Պետական պահպանութեան ներքոյ գտնուող 591 յուշարձաններից միայն քսանհինգն էր հայկական, որոնցից ընդամէնը եօթը՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում: 1968 Ապրիլի 2ի թիւ 140 եւ 1988 Ապրիլի 27ի թիւ 145 որոշումներում հաստատուած են Աղբրեջանի տարածքում գտնուող՝ պետութեան կողմից ընդունուած յուշարձանները, որոնց թւում բացակայում է նոյնիսկ Գանձասարի վանական համալիրը:

Այս տարածաշրջանի հայկական հոգեւոր եւ մշակութային արժէքների նկատմամբ բարբարոսութեան դրսեւորումների բա-

5 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Ս., Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Աղբրեջանին բռնակցուած շրջաններում, Երևան 1999, 7:

զույժ օրինակներ են վաւերագրուած առանձին հետազօտողների աշխատութիւններում, որոնցում այդ ամէնը որակուած է որպէս քարտէս պատկերազմ՝ ուղղուած պատմական յիշողութեան դէմ: Դրանով իսկ ազրբեջանական կողմը հետամուտ էր միայն մէկ հիմնախնդրի՝ ապացուցել, որ Կուր-Արաքսեան միջագետքը պատկանել է ոչ թէ Հայաստանին, այլ Կովկասեան Աղուանքին, իսկ վերջիններս միջեւ սահմանաբաժանը եղել է ոչ թէ Կուր գետը, այլ Արաքսը: Միանգամայն ակնյայտ է այն մեխանիզմը, որն առաջադրել են ազրբեջանցիները: Կովկասեան Աղուանքը զբաղեցնում էր նաեւ Կուրի աջափնեայ տարածքը, որ հայերի հետ կապ չունի, եւ որտեղ չեն կարող լինել հայկական յուշարձաններ, իսկ ամբողջ այդ տարածքում գտնուող յուշարձանները ստեղծել են աղուանները: Ըստ այս տրամաբանութեան՝ Ազրբեջանի տարածքում պահպանուած պատմական յուշարձանների թւում չեն յիշատակուած (պետական-պաշտօնական գրանցումներում, գրօսաշրջային ուղեցոյցներում, ուսումնական ձեռնարկներում, հետազօտական աշխատութիւններում) տեղի հայկական յուշարձանները, որ սակայն վաւերագրել են այլազգի հետազօտողները:

Ռուս հնագէտ է. Պէտրիխան Քարավաճառի շրջանի հայկական յուշարձանների ու բնակավայրերի մասին գրում է. «Բազմաթիւ բնակելի քարայրեր, գիւղերի աւերակներ, բերդապարիսպներ, մատուռներ ու եկեղեցիներ խօսում են երբեմնի կեանքի մասին՝ ներկայիս գրեթէ մարդագուրկ հեռաստաններում: Յաւօք, գերակշռող մեծամասնութեամբ այդ բոլոր յուշարձանները ոչ միայն չեն հետազօտուած, այլեւ անգամ չեն յիշատակուած գրականութեան մէջ թէկուզ հաշուառման կարգով: Այստեղ ստուար զանգուածներով ամէնուր ապրող հայերից մնացել են լայնատարած գերեզմանոցներ, որ սփռուած են թէ՛ կիսաւեր եկեղեցիների շուրջ եւ թէ՛ առանձին»⁶:

Տասնամեակներ տեւող Ազրբեջանի իշխանութիւնների եւ այսպէս կոչուած «գիտնականների» յուշարձանների աղուանացման մտայնութիւնը շարունակուած է նաեւ մեր օրերում: Տաս տարի առաջ Լեռնային Ղարաբաղի տարածքում՝ Ասկերանի շրջանում՝ Աղղամի դիմաց, հնագիտական պեղումներով յայտնաբերուած⁷ Տիգրան Մեծի կառուցած եւ նրա անունը կրող քաղաքը

6 ПЧЕЛИНА, Е., *Армянские памятники на территории Азербайджанской ССР*, Ленинград 1940, 243.

7 Պեղումներն իրականացրել է ՀՀ ԳԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան Արցախի հնագիտական արշաւախումբը պ.գ.դ. Հ. Պետրոսեանի ղեկավարութեամբ:

աղբբեջանցիներն սկզբնապես համարում էին հնարածին: Նրանք նոյնիսկ յանդգնում էին կասկածի տակ դնել չինարարական աւերակներով բացուած բնակավայրի գոյութիւնը: Այսօր արդէն, երբ անժխտելի իրողութիւն են քաղաքի մինչեւ 5,0մ բարձրութեամբ պահպանուած, պարիսպներով պարագծուած Ամրացուած թաղամասը, նրա շուրջ տարածուող Կենտրոնական եւ Անտիկ թաղամասերը, վաղբրիատոնէական հայկական եկեղեցիների եւ այլ կառոյցների ճարտարապետական մնացորդները, աղբբեջանցիները տարաբնոյթ հրապարակումներում ներկայացնում են որպէս աղուանական՝ արհամարհելով բոլոր իրեղէն ապացոյցները եւ դաւաճանելով գիտական անաչառութեան:

Արցախահայութեան հոգեւոր եւ մշակութային արժէքների հանդէպ բարբարոսութիւնը միայն քարոզչութեամբ չի սահմանափակուել: 1970ական թուականներից ի վեր՝ աղբբեջանցիները որդեգրել են ամէն գնով հայկական ճարտարապետական ժառանգութիւնը իւրացնելու կամ ոչնչացնելու ուղին: Այդ գործողութիւնների հետեւանքով, ինչպէս ահագանգում էին մասնագէտները. «հողօգտագործման նպատակով բուլդոզերներով աւերուել եւ հողին եւ հաւասարեցուել 13 պատմահնագիտական յուշարձաններ: Պայքուցիկ նիւթեր եւ օգտագործուել Մեծ Թաղարի Մծախաչ եւ Ագոխի փարանձաններում, Ամարասի եւ Կաղանկատոյժի բնակավայրերի տարածքներում: Փորումներ եւ կատարուել Գրիգորիսի դամբարանում (Ամարասի վանքում), երկրաբանական հետազոտութիւններ կատարելու պատրուակով հորանցքներ եւ փորուած Դաղիվանքի յուշարձանների տակ... ԺԲ.-ԺԳ. դարերի երկու կամուրջ, ԺԳ.-ԺԷ. դարերի 3 մատուռ, շուրջ 70 խաչքար, դամբարաններ՝ առանց օրէնքի արձանագրելու գոհ եւ դարձել Սարսանգի ջրամբարի կառուցմանը՝ փարերն օգտագործելով պատուարի մէջ կամ թողնելով ջրամբարի յատակում»⁸:

Հայկական վանքերի ու եկեղեցիների սրբատաշ քարերն օգտագործուել են նաեւ գիւղերում տներ եւ այլ շինութիւններ կառուցելու ժամանակ: 1950ական թուականներին քանդուած Գետամիջոյ սր. Աստուածածին վանքի շուրջը գոյացել էր Վանք գիւղը: Վանքի քարերն օգտագործուել են այդ գիւղի տների, նոյնիսկ գոմերի պատերի կառուցման համար: Վանքի շատ քարեր հանդիպում են վերոնշեալ թուականներին Չրաղ (որ Ճրագի աղաւաղուած տարբերակն է) գիւղի գլորոցի պատերի շարուածքում⁹:

8 ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ, Վ., Դարբ մեր մէջ, մենք՝ դարի, Երեւան 2003, 120:

9 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Ս., նշ. աշխ., 69:

Յուշարձանի ոչնչացման եւ քարերը որպէս շինաքար օգտագործելու օրինակ է նաեւ Տաք ջուր (Խատիսու) առողջարանի շրջակայքի՝ հայկական միջնադարեան եկեղեցիների քարերով կառուցուած կառավարական առողջարանը¹⁰ :

Ադրբեջանցիների կողմից յուշարձանների ինքնութեան ոչնչացման քաղաքականութիւն էր նաեւ «նորոգման» կազմակերպումը, որի աշխատանքների զոհ է դարձել Գանձակ քաղաքի սբ. Սարգիս եկեղեցին, որ երեսապատուել է աղիւսով՝ կորցնելով հայկական ճարտարապետական ոճը, եւ օգտագործուել որպէս ժողովուրդների բարեկամութեան պալատ¹¹ :

Յուշարձանների աւերումը մեծ չափերի է հասել արցախեան պատերազմի ժամանակ, երբ օգտուելով ընձեռուած առիթից՝ եկեղեցիներն ու վանքերը կանխամտածուած պայթեցուել են, հրետանակոծուել եւ ուժակոծուել: Արդիւնքում Գետաշէնի մօտ գտնուող Եղնասարի կանգուն վանքը վերածուել է աւերակների: Գնդակոծուել են Գանձասարի, Ամարասի, Դաղիվանքի տաճարները, Տող գիւղի եկեղեցին եւ այլ յուշարձաններ: Շուշիի սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոյ եկեղեցին այդ տարիներին երեք անգամ հրկիզուել է:

1991ին Շուշիի Մեղրեցոյ՝ Սբ. Ամենափրկիչ եռանաւ եկեղեցին վերածուել է ամառային կինոթատրոնի, Կանաչ ժամը՝ հանքային ջրերի սրահի, որի հետեւանքով եկեղեցու կառոյցը վտանգուել է¹²: 1990 Մայիսի 20ի համարում «Սովետական Ղարաբաղ» թերթը գրում էր. «Ադրբեջանական զինուած բանդայական ձեւաւորումները չեն դադարեցնում գազանութիւնները Ամարասի հովտում: Այստեղ տեղափոխուած տնտեսական կառոյցները աւերելուց եւ քալանելուց յետոյ Մայիսի 18-19-ին նրանց գազանութիւնների օբյեկտը դարձաւ Ամարասի վանքը: Իրենց հետ բերելով աւերման անհրաժեշտ ողջ տեխնիկան, յանցագործները ջարդեցին վանքի դռները եւ պատուհանները, գողացան կահոյքը, յափշտակեցին վանքի գանձարանը»:

Ազատագրուած տարածքներում եւ մասնաւորապէս Քարվաճառում ու Մարտակերտում հետախուզական շրջայցերի եւ

10 ՄԿՐՏԶԵԱՆ, Շ., Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջանի իրականացրած ցեղասպանութեան անատոմիան, Ստեփանակերտ 2003, 207:

11 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Ս., Հայկական յուշարձանների վիճակը Հայաստանի հարեւան ներկրներում, Ի վրասն հայութեան, (շրթերթ), 23 ապրիլ, 2002, 11:

12 ՄԵԼԻԲ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ, Լ., Ադրբեջանի ռազմական յանցագործութիւնները Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան իրադրութեան ներկայումս, Երեւան 1988, 149-140:

հնազիտական պեղումների ընթացքում մենք եւս հանդիպել ենք այլեւայլ եղանակներով յուշարձանների ոչնչացման դէպքերի: Ծար պատմական բնակավայրում, որ Խորհրդային Աղբբեջանի կազմում յայտնի էր հնչիւնափոխուած Զառ ձեւով, 1950ականներին կառուցուել են մի քանի բնակելի տներ եւ գիւղի դպրոցը, որի պատերում որպէս շինաքար օգտագործուել են նաեւ արձանազրակիր քարերի, խաչքարերի, տապանաքարերի բեկորները:

Մէկ այլ՝ Եղէգնուտ գիւղի տներից մէկի պատի շարքում որպէս շինաքար էր օգտագործուել խաչային յօրինուածքով քարը: Հանդարերդի վանքում պայթեցուել էր գաւիթը, որի հետեւանքով ծածկի զգալի մասը փլուզուել էր: Կանգուն շինութիւնների մեծ մասը շատ անմխիթար վիճակում էր: Տեղահանել եւ ձորն էին գլորել վանքի շուրջը գտնուող միջնադարեան գերեզմանոցի շատ տապանաքարեր եւ խաչքարեր: Արցախի ազատագրումից յետոյ հնարաւոր դարձան վանքի պեղումները եւ շրջակայքի հետազոտութիւնը: Երկամեայ պեղումների արդիւնքում ամբողջովին մաքրուեց, ամրակայուեց եւ մասնակի վերականգնուեց Հանդարերդի վանքը¹³:

Արցախի Վերին Խաչէն գաւառում գտնուող Զարեքտարի վանքի (այժմ՝ ԼՂՀ Նոր Ծահումեանի շրջան, գիւղ Զարեքտար) կառուցները ձեւափոխել էին եւ տասնամեակներ շարունակ օգտագործել որպէս անասնազոմեր:

Ի հարկէ պէտք է նշել նաեւ, որ Խորհրդային շրջանում արթնացած քարոզչութեան պայմաններում ոչ միայն աղբբեջանները, այլեւ հայերը եւս եկեղեցիները վերածում էին եթէ ոչ գոմի, ապա պահեստի, լաւագոյն դէպքում՝ ակումբի:

Մշակութային իւրօրինակ բարբարոսութեան դրսեւորումներ էին նաեւ պատմաճարտարապետական յուշարձանների վերականգնման եւ պահպանութեան անուան տակ իրականացուած աշխատանքները, որոնց հետեւանքով վանքերի եւ եկեղեցիների ճարտարապետութիւնն այլափոխուում էր: Այսպիսի ճակատագրի է արժանացել Վանքասարի է. դարի եկեղեցին, որ գտնուում է Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Մարտակերտի շրջանում, Ստեփանակերտից Մարտակերտ տանող մայրուղու ճախ

13. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, Լ., Հանդարերդի վանքի վերականգնման հայեցակարգը, Հայագիտական հանդէս, քիւ 1, Ստեփանակերտ 2010, 127:

ՊԵՏՐՈՍԵԱՆ, Հ. – ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Լ. – ՍԱՖԱՐԵԱՆ Վ., Հանդարերդը եւ նրա պեղումները, Երեւան 2009:

կողմում, Վանքասար կոչուող ամենաբարձր գագաթի վրայ: Միջնադարեան գողտրիկ կառույցը թէեւ կանգուն է մնացել, բայց կորցրել է իր դիմադիժը՝ ճարտարապետական ոճը, պատկանելությունը: Վանքասարի եկեղեցու՝ մեր կողմից կատարուած տեղազննումներն ու մանրամասն չափազրույթիւնները նպաստել են կառույցի յատակագծային եւ ծաւալատարածական յօրինուածքի ամբողջական եւ իրական պատկերը ներկայացնելուն եւ հնարաւորութիւն ընձեռել հասկանալու աղբրեջանական «վերականգնման» էութիւնը, որն իրականացուել է անցեալ դարի 80-ական թուականներին:

Նախնական յատակագծի վրայ վերականգնուել է մի ծաւալ, որ չի համապատասխանում նախնական կառույցին: Այդ «նորոգումներից» եկեղեցու ծաւալատարածական յօրինուածքն ու համաչափական համակարգը խաթարուել են, եւ աղճատուել է նրա նախնական յօրինուածքը: Վանքասարի եկեղեցու ոճական եւ շինարարական առանձնայատկութիւններին առնչուող վաղ միջնադարեան բոլոր յուշարձանները կառուցուած են այլ կերպ: Այսպիսի ձեւով վերականգնումը ոչ թէ չիմացութեան, այլ դիտաւորութեան արդիւնք է: Քաղաքական նպատակներ հետապնդող աղբրեջանական «հեռատես ձեռնարկը» լուրջ բարդութիւններ է յարուցել յուշարձանի նախնական տեսքի վերականգնման համար: Սակայն փաստական կուռնաների, համեմատական վերլուծութեան (մասնաւորապէս՝ Քարաշամբի, Ալլաբերի, Թալինի սբ. Աստուածածին եռախորան եկեղեցիների օրինակով) եւ տարածաշրջանի վաղ միջնադարեան հարուստ մշակութային շերտի ու ճարտարապետական համալիրների համադրութեամբ անհրաժեշտ է ներկայացնել անցեալի իրական պատկերը՝ աղուանական-աղբրեջանական կապի եւ ընդհանրութեան «տեսութեան», ինչպէս նաեւ հայ ժողովրդի արցախեան հատուածի ստեղծած նիւթական մշակութային յուշարձաններին աղուանական ծագում վերագրելու վարկածների ամբողջ սնանկութիւնը, ինչպէս նաեւ՝ հետազօտութիւնների միջոցով աղբրեջանական յարձակումներին հակահարուած տալ: Արդիւնքում ներկայացնում ենք Վանքասարի վերականգնութեան նախագիծը՝ առաջարկելով այն վերակառուցել¹⁴:

Վանքասարի եկեղեցին տուժել էր նաեւ արցախեան պատերազմից: Արեւմտեան ճակատում՝ բարաւորից վերել, արկը բաւական մեծ խոռոչ է բացել, որ սպառնում էր պատի կայունու-

14 ԿԻՐԱՆՈՍԵԱՆ, Լ., Վանքասարի եկեղեցու ճարտարապետութիւնը եւ աղբրեջանական «վերականգնումը», ՊԲՀ, 2013, քիւ 1, 127:

թեանը: 2011ի աշնանը ԼՂՀ Ձրօսաշրջութեան վարչութիւնն այստեղ իրականացրել է մաքրման, ամրակայման եւ բարեկարգման աշխատանքներ: Մասնակի ամրակայման աշխատանքներն աւարտուել են 2012ի Յունուարին, եւ եկեղեցու գմբէթին տեղադրուել է խաչը: Վերաշարուել է արեւմտեան ճակատի քանդուած մասը: Բացուածքներում տեղադրուել են մետաղական դռներ, ներսում կառուցուել է բեմը: Կարծում ենք, սակայն, որ այսպիսի աղաւաղուած ծաւալի վրայ յաւելումներ անելն աւելորդ միջոցառում է: Անհրաժեշտ է վերականգնել կառոյցի նախնական տեսքը, առաւել եւս կատարուած նորոգումները նոյնպէս գերծէնն սխալներից (արեւելեան խորանում անհամաչափ բեմի կառուցում, մուտքերում մետաղական դռների տեղադրում, արկից վնասուած արեւմտեան ճակատի խողովի վերաշարում՝ միջնադարեան շարուածքին անյարիր եղանակով): Յաւով ենք նշում, որ այլ տեղերում նոյնպէս հանդիպում ենք անթոյլատրելի դրսեւորումների, երեսպատում է Գանձասարի վանքի պարիսպը, Ասկերանի չրջանի Աւետարանոց (Չանաղչի) գիւղում՝ Արցախեան ազատամարտում նահատակուած քաջորդիների յիշատակին նուիրուած յուշակոթողը կանգնեցւում է վանքի միջնադարեան պարսպի վրայ՝ խաթարելով մշակութային բնանկարը:

Ներկայացուած ճարտարապետական յուշարձանները միայն փոքր մասն են այն ծանրակշիռ ժառանգութեան, որի նկատմամբ աղբրեջանցիներն իրականացրել են մշակութային եղեւն:

Աղբրեջանական իշխանութիւնների վարած քաղաքականութիւնը քրիստոնէական հայ ճարտարապետական յուշարձանների հանդէպ հիմնականում ունեցել է մի քանի ուղղութիւն՝ դրանց մասին պաշտօնական հրատարակութիւններում, տեղեկատուներում, ուղեցոյցներում՝ լռութեան պահպանում, էթնոմշակութային եւ կրօնական պատկանելութեան խեղաթիւրում, յուշարձանների կանխամտածուած աւերում եւ այլափոխում, յուշարձանների նկատմամբ զանազան բարբարոսական գործողութիւնների իրականացում, պայթեցումներ եւ ուժակոծումներ (Հանդաբերդի վանք, Գանձասարի, Ամարասի, Դաղիվանքի տաճարներ, Տող գիւղի եկեղեցի), շինութիւնների աւերում (Մար), հրկիզում (Շուշիի սրբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցի) եւ որպէս շինաքարի օգտագործում (Մար), եկեղեցիների վերածում դոմերի, ախոռների (Չարեքտարի վանք), պահեստների եւ այլ նշանակութեան շինութիւնների, հայկական եկեղեցիները՝ մահմեդական կառոյցների վերածում, հայկական շատ յուշարձանների քողարկում՝ հողով ծածկելու միջոցով, այցելութիւնների եւ ուսումնասիրու-

թիւնների արգելում, վերականգնման եւ պաշտպանութեան քողի ներքոյ յուշարձանների ծաւալատարածական յօրինուածքի, կերպարի եւ ինքնութեան ճարտարապետական ալլափոխում (վանքասարի եկեղեցի, գրեթէ բոլոր եկեղեցիների ու վանքերի վիմագիր արձանագրութիւնների, սրբապատկերների, խաչային յօրինուածքների եղծում):

ԼԻԻՊԱ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Summary

CULTURAL GENOCIDE
(BASED ON THE EXAMPLES
OF MONUMENTS IN ARTSAKH)

LYUBA KIRAKOSYAN

It is well known that architectural monuments on any territory are memories of the historical presence of any people and the best indicator of the historical belonging of that territory. This is well understood in Azerbaijan, where Armenian cultural and particularly architectural monuments have been steadily and deliberately destroyed. Such attitudes towards cultural heritage completely match the category of cultural genocide accepted by international groups.

When discussing the Armenian Genocide, one only remembers more than a million and a half innocent victims murdered, slaughtered, and driven away from their country to other places. The cultural loss and spiritual and material values and especially architectural monuments that were lost are given far less thought. Yet, for those who implemented cultural genocide, architectural monuments were the main target. Until recently, the architectural monuments of Artsakh, which was forcibly joined to Azerbaijan, were either destroyed or used for other purposes.

The isolation of Artsakh and its architecture in Azerbaijan had a far-reaching goal carried out by the Azerbaijani government which was to attribute Artsakh and its part of the Armenian people to Caucasian Albania – the seeming motherland of the Azerbaijanis. In order to substantiate the fabricated Caucasian Albanian theory, material and cultural monuments created by Armenians were attributed to Caucasian Albanians. To carry out this historiography of Azerbaijan, there is no obstacle to calling the cultural monuments of Nagorno-Karabakh (Artsakh), Syunik, and Nakhichevan as Caucasian Albanian (to be understood as Azerbaijani-Turkish), referring to these churches as the “fire temples” of Azerbaijan.

In a process that has lasted to the present time, politicians, historians, architects, archaeologists, ethnographers, and linguists use all available means to try to find Azerbaijani roots on the territory of Azerbaijan and to mark them off from Armenia and thus from the Armenian cultural heritage. To make the

mediaeval culture of Artsakh seem like Caucasian Albanian, the destruction of Christian churches, monasteries, and other architectural buildings was encouraged at the highest state level.

The policy of changing Christian Armenian architecture led by the Azerbaijani government was carried out in several ways. Nothing was said about them in the official publications or guidebooks. The ethno-cultural and religious identity was changed or the monuments were deliberately destroyed. Different barbaric actions were carried out, such as explosions (monastery of Handaberd, Yeghnasar monastery of Ghetashen), bombing (Gandzasar, Amaras, Dadivank monasteries, and a church in the village of Togh), razing the structure (monastery of Getamege, khachkar field of Jugha, Yeretsmankan monastery, Hakobavank), using the stones of the monuments as building material (Tsar, Takjur), using the churches as stables or stores (church of Charektar, Meghretsots church of Shushi, Green Chapel, St. Sargis of Gandzak), setting them on fire (St. Saviour Ghazanchetsots), changing their names (Takjur-Istisu), turning Armenian Christian churches into Muslim buildings, covering the remains of buildings with a thick layer of soil, prohibiting visits or research, changing the structure, view, and identity with the excuse of reconstruction and restoration (church of Vankasar), and destroying inscriptions, icons, and crosses in almost all churches.